ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

13.06.2023թ.

ՈՐՈՇՈՒՄ 412-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԿԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ, ԾԽԱԽՈՏԻ ԵՎ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 12-րդ կետերով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և 12-րդ կետերով, ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2022թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 164-Ն որոշմամբ և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Կարմեն Ստեփանյանի (ՀՎՀՀ 77941634) հանրային սննդի կազմակերպման և իրացման, ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն ստանալու մասին հայտը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Բավարարել անհատ ձեռնարկատեր Կարմեն Ստեփանյանի կողմից 2023 թվականի համար ներկայացված ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Շինուհայրի խաչմերուկ թիվ 3Ա հասցեում գտնվող գազալցակայանի հանրային սննդի օբյեկտում հանրային սննդի կազմակերպման և իրացման, ծխախոտի և ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն ստանալու հայտը:

2.Աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ երեք օրվա ընթացքում, սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2023/13/06
Ք.Գորիս